ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-26-Ը ՄՈՍԿՎԱ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ.**

   Տիգրան Մելքոնյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ.**

   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի վարչության պետ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ և ԺԱՄԿԵՏՆԵՐԸ.**

   Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն, 2019թ. հոկտեմբերի 24-26-Ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ.**

   ԱՊՀ էլեկտրաէներգետիկական խորհրդի գործադիր կոմիտե

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ).**

   Մասնակցել ԱՊՀ էլեկտրաէներգետիկական խորհրդի 55-րդ նիստին

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ.**

   Քննարկվեցին նիստի օրակարգով նախատեսված հարցերը.

   - ԱՊՀ մասնակից երկրների էներգահամակարգերի 2019-2020թթ. աշուն-ձմեռ նախապատրաստական աշխատանքները,
   - Էներգահամակարգերի հեռանկարային հաշվեկշիռները մինչև 2035թ. ժամանակահատվածում,
   - Միջպետական էլեկտրահաղորդման գծերում էլեկտրաէներգիայի որակի հսկման պարամետրերի վերաբերյալ ուղեցույցի նախագիծ,
   - Մեթոդական ցուցումներ կատեգորացված սպառողների էլեկտրամատակարարման հուսալիության վերաբերյալ,
   - Մեթոդական ցուցումներ էլեկտրաէներգետիկական համակարգերի հակավթարային փորձերի վերաբերյալ,
   - 2017-2018թթ. ժամանակահատվածում վերականգնվող էներգետիկայի, էներգաարդյունավետության և բնապահպանական հարցերի վերաբերյալ հաշվետություն,
   - Ռոսսետի ընկերության կողմից տեղեկատվության ներկայացում էլեկտրաէներգետիկական համակարգերում մինչև 2030թ. «Թվային փոխակերպումներն էներգետիկ համակարգում որպես գործիք խթանելու բարձր տեխնոլոգիական լուծումների համար»,

- ԱՊՀ էլեկտրաէներգետիկական խորհրդի գործադիր կոմիտեի միջոցառումների պլան, 2019թ. գործունեության վերաբերյալ ընթացիկ հաշվետվություն,
- ԱՊՀ էլեկտրաէներգետիկական խորհրդի 56-րդ և 57-րդ նիստերի անցկացման ժամկետների և վայրի մասին,
- Այլ հարցեր:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ.**

ԱՊՀ էլեկտրաէներգետիկական խորհրդի 55-րդ նիստի շրջանակներում ներկայացրել եմ տեղեկատվություն՝ ՀՀ էներգահամակարգի 2019-2020թթ. աշուն ձմեռ նախապատրաստական աշխատանքների, ինչպես նաև Հայաստանի էներգետիկայի բնագավառի ներկա իրավիճակի և զարգացման հեռանկարների վերաբերյալ տեղեկատվություն: Նիստի շրջանակներում էլեկտրաէներգետիկայի բնագավառում տեխնիկական հարցերի շուրջ աշխատանքային քննարկումներ եմ ունեցել Ռուսաստանի Դաշնության, Տաջիկստանի, Բելառուսի, Ղազախստանի էներգետիկայի նախարարությունների և Ռոսսետի, Ինտեր ՌԱՕ, ՖՍԿ, Բելէներգո ընկերությունների, ինչպես նաև ԵՏՀ էներգետիկայի դեպարտամենտի գործընկերների հետ:

8. **ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ.**

Օրակարգային բոլոր հարցերի վերաբերյալ ԱՊՀ էլեկտրաէներգետիկական խորհուրդն ընդունել է որոշումներ:

9. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ.**

Շարունակել աշխատանքները ԱՊՀ էլեկտրաէներգետիկական խորհրդի շրջանակներում: Հետևողական աշխատանք տանել Հայաստանի էլեկտրաէներգետիկական համակարգն ԱՊՀ էլեկտրաէներգետիկական համակարգի հետ փոխկապակցելու և մյուս երկրների էլեկտրաէներգիկական համակարգերի հետ զուգահեռ աշխատանքի հնարավորություն ստեղծելու նպատակով:

10. **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ:**

28 հոկտեմբերի 2019թ.